

## ՈՎ Է ԱՊՐՈՒՄ ԺԱՄԱՑՈՒՅՑԻ ՄԵՋ

Ես գիտեմ, որ ձկներն ապրում են ծովում, հովիվները՝ սարերում, թեյամանները՝ խոհանոցում:

Դրանից բացի գիտեմ, որ ծիտիկն ապրում է իր բնում, տներն ապրում են գյուղերում ու քաղաքներում:

Նույնիսկ գիտեմ, որ խաղերն ապրում են հեռուստացույցի մեջ, իսկ ամպերը՝ երկնքում:

Բայց թե ով է ապրում ժամացույցի մեջ, ես մինչև հիմա չգիտեմ: Քանի՜ անգամ քանդել եմ ժամացույցները. դրանց մեջ միայն փոքրիկ անիվներ են ու պտուտակներ: Բա ո՞վ է սլաքները շարժում ու չխկչխկացնում, չե՜մ հասկանում...

### ԽԱՉԲԱՌ «ՔՈ ՀԵՔԻԱԹՆԵՐԸ»




1. . . . Նազարը:
2. . . . արկածները:
3. Կիկոսի . . . :
4. Պոչատ . . . :
5. . . . խոզուկները:
6. Պույ-պույ . . . :
7. Շունն ու . . . :
8. Մի . . . մեղրը:
9. Չիպոլինոյի . . . :
10. Չարի . . . :
11. Կարմիր . . . :
12. Մկների . . . :

